

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 45 - I _____


«19» սեպտեմբերի 2022

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 10-ՐԴ
ԴԱՍԱՐԱՆԻ ՀԵՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել 2022-2023 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով 10-րդ դասարանի հենքային ուսուցման համար «Երկրաչափություն» առարկայի լրամշակված ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



9/19/2022

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի սեպտեմբերի 19-ի N 45-L հրամանի

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ
10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (հենթալին)

Թեմա 1	
Ուղիղներ, անկյուններ, հարթություններ	
Նպատակը	
<ul style="list-style-type: none"> Տարածաչափության հիմնական հասկացությունների, ուղիղների, ուղղի և հարթության, հարթությունների զուգահեռության, խաչվող ուղիղների, ուղիղների կազմած անկյան հասկացությունների ներմուծումը, դրանց հետ կապված օրինաչափությունները խնդիրներ լուծելիս կիրառելու հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Տարածական պատկերացումների խորացումն ու զարգացումը: 	
Վերջնարդյունքները	
ՄԵ103.Ե.ՏՃ.1	Սահմանի զուգահեռ, հատվող, խաչվող ուղիղներ հասկացությունները: Նշի զուգահեռ, հատվող, խաչվող ուղիղների զույգերը (օր. ուղղանկյունանիստում):
ՄԵ103.Ե.ՏՃ.2	Ձևակերպի խաչվող ուղիղների հայտանիշը, կիրառի խնդիրներ լուծելիս:
ՄԵ103.Ե.ՏՃ.3	Սահմանի ուղղի և հարթության զուգահեռությունը, թվարկի և գծի ուղղի և հարթության փոխդասավորության դեպքերը:
ՄԵ103.Ե.ՏՃ.4	Ձևակերպի և կիրառի ուղղի և հարթության զուգահեռության հայտանիշը:
ՄԵ103.Ե.ՏՃ.5	Սահմանի տարածության մեջ ուղիղների կազմած անկյուն հասկացությունը:
ՄԵ103.Ե.ՏՃ.6	Գտնի տարածության մեջ ուղիղների կազմած անկյունը:
ՄԵ103.Ե.ՏՃ.7	Թվարկի և գծի հարթությունների փոխդասավորության դեպքերը: Սահմանի զուգահեռ հարթություններ հասկացությունը:

ՄԵ103.Ե.ՏՀ.8	Սահմանի և գծի քառանկիստը, անվանի դրա տարրերը:
ՄԵ103.Ե.ՏՀ.9	Սահմանի հարթությանն ուղղահայաց ուղիղը, ուղղի և հարթության կազմած անկյունը: Պատկերի և կիրառի դրանք խնդիրներ լուծելիս:
ՄԵ103.Ե.ՏՀ.10	Ձևակերպի ուղղի և հարթության ուղղահայացության հայտանիշը, կիրառի խնդիրներ լուծելիս:
Բովանդակությունը	
<ol style="list-style-type: none"> 1. Ուղիղների փոխդասավորությունը հարթության վրա: Չուղահեռ ուղիղների հատկություններն ու հայտանիշները 2. Ուղիղների փոխդասավորությունը տարածության մեջ 3. Խաչվող ուղիղների հայտանիշը 4. Ուղղի և հարթության փոխդասավորությունը, ուղղի և հարթության զուգահեռության հայտանիշը 5. Ուղիղների կազմած անկյունը 6. Հարթությունների փոխդասավորությունը 7. Քառանկիստ 8. Հարթությանն ուղղահայաց ուղիղ: Ուղղի և հարթության ուղղահայացության հայտանիշը 9. Ուղղահայաց և թեքեր: Ուղղի և հարթության կազմած անկյունը 	
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին	
Կապը հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ3, Մ4, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ29	

Թեմա 2
Բազմանկյուն, բազմանկիստ
Նպատակը
<ul style="list-style-type: none"> • Բազմանկիստի, դրա տեսակների ու դրանց տարրերի ներմուծումը, դրանց հետ կապված օրինաչափությունները խնդիրներ լուծելիս կիրառելու հմտությունների ձևավորումն ու զարգացումը
Վերջնարդյունքները

ՄԵ10Յ.Ե.ՏՃ.11	Սահմանի բազմանիստ հասկացությունը, նկարագրի բազմանիստը, իմանա և կիրառի Էյլերի բանաձևը:
ՄԵ10Յ.Ե.ՏՃ.12	Նկարագրի և գծի զուգահեռանիստը, անվանի դրա տարրերը:
ՄԵ10Յ.Ե.ՏՃ.13	Ձևակերպի զուգահեռանիստի հատկությունները, կիրառի խնդիրներ լուծելիս:
ՄԵ10Յ.Ե.ՏՃ.14	Սահմանի բուրգ, կանոնավոր բուրգ հասկացությունները, անվանի դրանց տարրերը:
ՄԵ10Յ.Ե.ՏՃ.15	Լուծի խնդիրներ բուրգի վերաբերյալ:

Բովանդակությունը

1. Բազմանկյուններ: Բազմանկյան տարրերն ու անկյունների գումարը
2. Եռանկյան տեսակներն ու դրանց հատկությունները
3. Քառանկյան տեսակները և դրանց հատկությունները
4. Բազմանիստ, ուռուցիկ և ոչ ուռուցիկ բազմանիստեր: Էյլերի բանաձևը
5. Չուգահեռանիստ
6. Բուրգ

Միջառարկայական կապեր

Չայոց լեզու. Ստեղծել տարբեր ոճերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին

Կապը հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ

Մ3, Մ4, Մ5, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ29